ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գ.Գողթանիկ 01.04.2016թ.

ԳՈՂԹԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015Թ-ԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն թվականի ապրիլի 1-ին Գողթանիկ համայնքում տեղի ունեցավ ժողով՝ նախագահությամբ Հ.Սանվելյանի և քարտուղարությամբ Ա.Նազարյանի, որին մասնակցում էին Գողթանիկ համայնքի ղեկավարի աշխատակազմը, ավագանու անդամները, գրադարանավարը և բուժքույրը:

Համայնքի ղեկավար Հ.Սանվելյանը ժողովի մասնակիցներին ներկայացրեց հաշվետվություն՝ 2015թ-ին համայնքում կատարած աշխատանքները և առկա խնդիրների մասին:

Հարգարժան ժողովի մասնակիցներ

Ես ցանկանում եմ Ձեզ ներկայացնել այն կատարած աշխատանքները, որոնք հաշվետու ժամանակաշրջանում կարողացել ենք իրագործել և այն հիմնական խնդիրները, որոնք առկա են համայնքում:

Համայնքում կատարել ենք ներքոհիշյալ աշխատանքները.

1.Փոսալցվել են 2,5կմ. երկարությամբ Հերմոն-Գողթանիկ միջհամայնքային ճանապարհը

2.Տեղադրվել է փողոցային լուսավորություն համայնքի 4 փողոցներում

3.Մաքրվել են ոռոգման ջրի ներհամայնքային ջրատար առուները

4.Վերանորգվել է 3 հատ սելաֆատարներ և տեղադրվել է 1000դույմանոց 10 մետր խողովակ

5.Վերանորգվել են 2 հատ կանգառ

Հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված բյուջեն կատարվել է 100,6%:

Համայնքի բյուջեի եկամտային մասը ընդհանուր միջոցներով տարեկան կտրվածքով կատարված է

N	եկամտատեսակ	նախատեսված	կատարված	շեղում	%
1	Գույքահարկ	120 000	145 100	-25 100	120.9
2	հողի հարկ	450 000	451 414	-1 414	100,3
3	հողի վարձավճար	1 300 000	1 274 009	25 991	98

Ազատ մնացորդ՝3317896 ՀՀ դրամ.

Որից՝ Վարչական 371164 ՀՀ դրամ,

Ֆոնդային՝ 2946732 ՀՀ դրամ:

Համայնքում առկա խնդիրներն են

1.Մանկապարտեզի շենքի և տանիքի կապիտալ վերանորոգում.

2.Դպրոցի շենքի և տանիքի կապիտալ վերանորոգում, սպորտային գույքի ձեռքբերում.

3.Խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի կապիտալ վերանորոգում.

4.Գրասենյակային գույքի ձեռքբերում.

5.Միջհամայնքային և հանդամիջյան ճանապարհների վերանորոգում

6.Ֆուտբոլի դաշտում դարպասների տեղադրում

7.Մանկական խաղահրապարակի կառուցում

Ժողովի մասնակիցները համայնքի ղեկավարի 2015թ-ի կատարած աշխատանքները գնահատեցին բավարար:

ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.ՍԱՆՎԵԼՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՆԱԶԱՐՅԱՆ